*
* *

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ

Օ՛ լուռ կաց, ընկեր. այդ ինչ ես երգում.
Ինչու՞ ես խաղաղ հոգիս փոթորկում
Ուրախ օրերի սիրելի երգով
Եւ սիրտս վառում անցեալի կրակով...
Քո ձայների հետ վաղուց հեռացած
Մի ուրիշ սատկեր մտքումս երևաց.
Ահա, կենդանի կանգնեց առաջիս,
Եւ, ահա, դարձեալ կարօտ ականջիս
Հնչում է նորա ձայնը սրտալի,
Որպէս երբեմն, երբ սիրուած էի։
Եւ մտքումս ահա լուսաւորուեցան
Հին ցնորքներս, անցքեր զանազան,
Գծերը հոգուս ծանօթ դէմքերի,
Տեսարանները հայրենի երկրի,
Այն օրհնեալ երկրի, ուր մի ժամանակ
Վայելում էի լիուլի հրճուանք...
Բայց զրկուած եմ ես այժմ բոլորից.
Դու չիշեցնում ես կորուստս նորից—
Երջանկութիւնս մռայլ վիճակում
Եւ այդպէս անգութ սիրտս կարատում...
Ո՛հ, ներում եմ քեզ, չեմ յանդիմանում.
Զը գիտես, հոգիս, թէ ինչ ես անում.
Ուսկայն մի՛ երգիր այդ երգը լինճ մօտ,
Թող, երգիր ուրիշ մի երգ անծանօթ։

1892 թ., օգոստոսի 14։